

Կոնտենտ-անալիզ . մեթոդի նկարագրությունը եւ կիրառությունը

Հեղինակ՝ Սյուզաննա Բարսեղյան
Սոցիոլոգ վերլուծաբան

17 հուլիս, 2010թ.

Turnanyan str. 32/4, s.1, Yerevan 0001, Armenia

ipsc@ipsconsulting.org

www.ipsc.am

Institute for Political and Sociological Consulting

Քաղաքական եւ սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ



Կոնտենտ-անալիզի պատմությունը

Կոնտենտ-անալիզ (անգլերեն՝ content-analysis) բառացի նշանակում է բովանդակության վերլուծությունն եւ կիրառվում է հասարակական գիտություններում, առավելապես՝ սոցիոլոգիայում: Այն լայն կիրառում է գտել ինֆորմացիոն դարաշրջանում: Մեթոդի կիրառման առաջին փորձերից կարելի համարել դեռեւս 18-րդ դարում Շվեդիայում իրականացված ուսումնասիրությունները, երբ գրքերում որոշակի թեմաներով տեքստերի հաճախականությունը նրա հերետիկոսության չափանիշ էր դիտարկվում: Սակայն առաջին անգամ content-analysis տերմինը սկսել են օգտագործել ամերիկյան լրագրողները 19-րդ դարավերջին ու 20-րդ դարի սկզբին: Կոնտենտ-անալիզն առավել լայն կիրառություն գտավ քաղաքագիտական հետազոտություններում՝ Հ.Լասուելի (Harold Lasswell, ամերիկացի քաղաքագետ, սոցիոլոգիայի Չիկագոյի դպրոցի հիմնադիրներից մեկը) կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ քարոզչական նյութերի վերլուծության համար: 1960-ականների սկզբին մեթոդը բավականին կատարելագործվեց ֆրանսիացի լրագրող Ժ.Քայզերի, ապա նաեւ նրա հետետրդուհի Է.Մորենի կողմից:

Ի՞նչ է կոնտենտ-անալիզը:

- Կոնտենտ-անալիզ են անվանում ուսումնասիրվող երեւոյթների, գործընթացների մասին փաստաթղթերում առկա քանակական ու որակական տվյալների հավաքագրումը:
- Կոնտենտ-անալիզը տեղեկատվության աղբյուրի ձեւի եւ բովանդակւոյթյան համակարգային մշակումն է, գնահատականը եւ մեկնաբանումը: Նման ձեւով ուսումնասիրումը թույլ է տալիս նկատել փաստաթղթում այն, ինչ դուրս է մնում մակերեսային հայացքով ուսումնասիրելիս, եւ ինչը կարելոր սոցիալ-քաղաքական իմաստ ունի:
- Կոնտենտ-անալիզը իմաստային եւ խորհրդանշական նկարագրւոյթյան է ենթարկում փաստաթուղթը, կոդավորում եւ քանակական ու որակական տեղեկատվւոյթյան է վերածում փաստաթղթի բովանդակւոյթյունը:

Ի՞նչն է համարվում փաստաթուղթ:

Կոնտենտ-անալիզի օբյեկտ են հանդիսանում փաստաթղթերը: Դրանք են՝


- ❖ գիրք,
- ❖ թերթ,
- ❖ ամսագիր,
- ❖ հայտարարություն,
- ❖ էլույթ, հարցազրույց
- ❖ կարգախոս,
- ❖ գովազդ,
- ❖ լուսանկար,
- ❖ իրավական ակտ,
- ❖ կուսակցական ծրագրի,
- ❖ քարոզչական նյութ,
- ❖ գեղանկար,
- ❖ արվեստի գործ,
- ❖ կինո,
- ❖ տեսաձայնագրություն,
- ❖ պաշտոնական ել/կամ մամուլի հաղորդագրություն,
- ❖ պատմական աղբյուր,
- ❖ գեղարվեստական գրականություն եւ այլն:

Ինֆորմացիայի աղբյուրները

Ինֆորմացիոն աղբյուրները կարելի է բաժանել 3 կատեգորիաների՝

1. Ներքին ծագման (կազմված մեր կողմից ուսումնասիրվող անհատի, կազմակերպության կողմից) եւ ներքին կողմնորոշվածության (ներքին շրջանառության, որոշման կայացման)
2. Ներքին ծագման, բայց արտաքին կողմնորոշվածության (ինֆորմացային հատուկ մատուցումն այնպես, որ մարդկանց մոտ ձեւավորվեն աղբյուրի հանդեպ որոշակի իմիջ, ինչը կարող է ճշգրտորեն արտահայտել իրականությունը կամ աղավաղել որոշմանկայացման գործընթացն ու արդյունքները)
3. Արտաքին ծագման, բայց ներքին կողմնորոշվածության (օրինակ՝ նախընտրական քարոզչությունը, ինչը ընդունողին/յուրացնողին նախնական նյութ է տրամադրում որոշման կայացման համար)

Փաստաթղթում առկա տեղեկատվության ձևերը:



Կոնտենտ-անալիզի տարբերությունն այլ մեթոդներից.
Հնարավորություն է տալիս ուսումնասիրել ոչ միայն երեւոյթն ինքնին, այլեւ այն
մտցնում է սոցիալական ենթատեքստի մեջ, ինչը ենթադրում է բացահայտել
ուսումնասիրվող երեւոյթն ամբողջությամբ:

Ապագա

- Բացահայտում է՝ ինչ կլինի նրանից հետո եւ ինչպէս կազդի հասցեատիրոջ վրա

Ներկա


- Բացահայտում է այն, ինչ գոյություն ունի միայն նրանում

Անցյալ

- Բացահայտում է, այն ինչ կար առաջ եւ տեղ է գտնում նրանում

Կոնտենտ-անլիզը քանակակա՞ն, թե՛ որակական մեթոդ է:

Կոնտենտ-անլիզը
մեթոդ է, որը
պարունակում է ե՛ւ
քանակական, ե՛ւ
որակական
բաղադրիչներ, որոնք
հավասարապես կարելու
են ընդհանուր
վերլուծության մեջ:
Մակայն մեթոդը,
ընդհանուր առմամբ,
որակական է, քանի որ
նրանում հաշվող
քանակական
ցուցանիշները նույնպես
ընդհանրացվում են
որպես որակական:



Մեթոդի կիրառման ոլորտները

Կոնստենտ-անալիզ մեթոդը սոցիոլոգիայում կրառվում է արդեն մեկ դարից ավելի, սակայն վերջին տասնամյակում այն լայն կիրառում է գտել նաև սոցիալ-հումանիտար մի շարք գիտություններում՝

- սոցիալական աշխատանք,
- մակավարժություն,
- հոգեբանություն,
- տնտեսագիտություն,
- իրավագիտություն,
- շուկայագիտություն,
- քաղաքագիտություն,
- լրագրություն,
- պատմություն,
- գրականագիտություն,
- մարդաբանություն,
- փիլիսոփայություն,
- մշակութաբանություն
- անձնակազմի կառավարում եւ այլն:

Մեթոդի կիրառման թեմաները

Կոնսենս-անալիզ մեթոդի օգնությամբ ուսումնասիրվում են ամենատարբեր թեմաներ՝

- սոցիալական,
- տնտեսական,
- մարքեթինգային,
- քաղաքական,
- կրոնական,
- մանկավարժական,
- գովազդային,
- քարոզչական,
- լրագրողական,
- հոգեբանական,
- իրավական,
- փիլիսոփայական,
- մշակութային եւ այլն:

Մեթոդի իրականացման կանոնները

Ավանադարձ տեքստն ուսումնասիրվում է լեզվաբանության, հերմենևտիկայի, սեմիոտիկայի, մշակութաբանության եւ գրականագիտության շրջանակներում: Մակայն կոնտենտ-անալիզը սկզբունքորեն այլ տեսանկյունից է մոտենում տեքստին: Այն սահմանում է հետեւյալ կանոնները.

- Հետազոտել կարելի է միայն այն, ինչ հաստատված է /ֆիքսված է: Այն, ինչ հաստատված չէ, գոյություն չունի:
- Գոյություն ունի ինֆորմացիայի ֆիքսման երկու տարբերակ՝ մարդու գիտակցությունը (հիշողությունը) եւ ցանկացած նյութական ֆիզիկական կրիչ:
- Ուսումնասիրել կարելի է միայն երկու ձեւով՝ վերլուծական եւ վիճակագրական:
- Ուսումնասիրման վիճակագրական ձեւն իր հերթին երկու տարբերակ ունի՝ ինտուիտիվ եւ ձևայնացված:
- Ձևայնացված տարբերակն ունի երկու տեսակ՝ գծային եւ երկչափ հաճախականության բաշխում:

Կոնտենտ-անալիզի որակական եւ քանակական վերլուծության բաղադրիչները


Քանակական վերլուծություն

- Վիճակագրական վերլուծություն
- Տեղեկատվության հավաքագրման ձեւայնացում
- Տեղեկատվության աղբյուրի ընտրանք
- Տեքստի համակարգչային մշակում

Որակական վերլուծություն

- Իմաստային վերլուծություն
- Մոտիվացիոն վերլուծություն
- Ինտենտ-անալիզ

Քանակական վերլուծության փուլերը



Մոտիվացիոն վերլուծություն




Ինտենտ-անալիզ

Ինտենտ-անալիզը խոսքի, ելույթի ուսումնասիրման մեթոդ է, ինչը թույլ է տալիս բացահայտել հեղինակի խոսքում ինտենցիաները, ելույթի թաքնված ենթատեքստը:

Մարտահրավերներ.
ո՞վ է մեղավոր

Իրավիճակից դուրս
գալու
ոազմավարություն.
ի՞նչ անել



Շնորհակալություն

«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտ



Հետադարձ կապ.

Հասցե. Թումանյան փ. 32/4, բն.1, Երևան 0001, Հայաստան

Հեռ. **+37410 541821**

Ֆաքս. **+37410 541821**

Էլ-փոստ. info@ipsc.am

Կայք. www.ipsc.am